

ՈՂՋՈՒՅՆ

Գյուլմրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հիմնադրման 75 ամյակին նվիրված ինֆորմատիկա առարկայից կազմակերպվող ներբուհական օլիմպիադային մասնակցում էին n տղա և m աղջիկ:

Ժյուրիի նախագահը, սպասելով օլիմպիադայի մասնակիցներին, նկատեց, որ յուրաքանչյուր տղա, մտնելով համակարգչային լաբորատորիա, սեղմում է բոլոր տղաների ձեռքերը և յուրաքանչյուր աղջկա ասում է ողջույն, ընդ որում աղջիկները նրան ևս պատասխանում են ողջույն: Աղջիկների հետ ամեն ինչ ավելի պարզ է: Յուրաքանչյուր աղջիկ, մտնելով համակարգչային լաբորատորիա, յուրաքանչյուրին ասում է ողջույն և նույն կերպ էլ նրան են պատասխանում:

Ժյուրիի նախագահին հետաքրքրեց, թե ընդհանուր առմամբ քանի ձեռքսեղմում տեղի ունեցավ և քանի անգամ հնչեց ողջույն բառը, եթե բոլոր մասնակիցները հաջորդաբար են մտնում համակարգչային լաբորատորիա:

Մուտքային տվյալներ

Տրված են երկու ամբողջ թիվ n և m ($1 \leq n \leq 10^4$; $0 \leq m \leq 10^4$):

Ելքային տվյալներ

Արտածել ձեռքսեղմումների և ողջույնների թիվը:

Օրինակներ

N ^o	stdin	stdout
1	1 2	0 6
2	5 0	10 0